

ՆՈՐ ԳԻՒՏ ԱՐ

(Պինդարոսի տաղերը և Եւրիպիդէսի մէկ ողբերգութիւնը)

Հնախուզութիւնն այսօր Եղիպտոսի մէջ մեծամեծ գիտեր կ'ընէ. ասոնք ոչ միայն գիտական աշխարհին կը վերաբերին այլ նաեւ գրականին. յերեւան կը հանէ կորստւած ողբերգութիւններ, քանաստեղծութիւններ, նամակներ:

Պրոֆ. Կրինֆելտ աշխատութիւնը յաջողութեամբ կը պսակուի իր ֆեհենշար գիւղի մէջ գտած յոյժ հետաքրքրական պապիրոսներով՝ որ են հետեւեալները:

Նամակ մը 15 տարուան պատանիէ գրուած՝ որուն մէջ կ'աղաչէ հօրը որ զինքը Աղբըսանդրիա տանի և եթէ խնդիրը չի կատարէ՝ կը սպառնայ ոչ ուսեւ ոչ սորվիլ: Ուրիշ մը որ Քրիստոսի երկրորդ դարուն կը վերաբերի՝ դաշինք մըն է գործակատարի մը և սղագրութեան վարժապետի մը մէջ. առաջինս կ'ուզէ իր մէկ գերին անոր քով դնել: Այս տեսակ պապիրոսներուն կը վերաբերին բազմաթիւ սեղանի հրաւիրագիրներ, յայտարարութիւնը մէկու մը՝ որուն մասին կասկած ըլլալով թէ քրիստոնեայ է, կը հաստատէ թէ ըրած է կայսեր աստուածութեան սահմանուած զոհը:

Մեհենական գրերու պապիրոսներէն գտնուած է գրքի մը ամբողջական մէկ էջը, որ վիճարանութիւն մըն է Քրիստոսի՝ և Քահանայապետի մը մէջ, հանդիպած Երուսաղէմայ տաճարին մէջ. վերջինս կը կշտամբէր զՔրիստոս որ առանց սրբուելու տաճար կը մտնար. իսկ Քրիստոս կը պատասխանէ որ ներքին սրբութիւն հարկաւոր է:

Դարձեալ տեղի ունեցաւ գրական անհունապէս հետաքրքրող գիւտ մը. Պինդարոսի տաղերուն գիւտը. ասոնք մինչեւ ցայժմ անծանօթ էին:

Այս տաղերը շինուած են ի պատիւ Թէբէի, Քիոսի, Դելոսի, Արդերայի, Դեղ-

փեայ, Այս բաւականի ստուար բեկորներէն կրնայ տեսնուիլ Պինդարի երգերուն գեղեցկութիւնը. անոնցմէ Քիոսի նուիրուածը ջատագովութիւն մըն է անպաճոյճ կեանաց: Ամենէն գեղեցիկն ի պատիւ Դեղփիսին է որուն միայն մէկ մարդ գտնուած է:

Պրոֆ. Կրինֆելտ հրատարակած է շատ հետաքրքրական պատմական պապիրոս մը, թերեւս ամենամեծը՝ յետ 1890ի գրտնուածին, որ կը պարունակէր Արիստոտելի Արեւելի սահմանադրարկներ:

Պատմութիւն մ'է. 396 և 394 թուականներու վրայ կը խօսի. Քսենոփոնի պատմութեան պէս շարունակութիւն մ'է Թուկիդիդէսի պատմութեան: Եթէ հեղինակն ինքնին որ կը կարծուի թէ պոպոկաբայ ըլլայ՝ չի կրնար Թուկիդիդէսի հետ մրցիլ՝ բայց անտարակոյս մանրամասն ուսումնասիրութեանց համար, ինչպէս ամփոփ ոճոյ, արդի տեսութեանց, պատճառաց քննութեան, հոգեբանական դիտողութեանց համար Քսենոփոնէն աւելի բարձր կը տեսնուի: Ամենէն կարեւոր մասն է այն՝ յորում հեղինակը արտուղութիւն մը կ'ընէ Բիոիւտացւոց սահմանադրութիւնը ներկայացնելու համար՝ որ մինչև ցարդ անծանօթ էր: Այս թանկագին գիւտը միջոց կու տայ կատարելապէս ճանչնալու Յունական կեանքը:

Ինչպէս վերը ըսինք՝ նոր գտնուած պապիրոսները հրատարակուած են Եղիպտական խաղաղութեան ընկերութեանէն («Օրգանիզմ»-ի պապիրոսներու հինգերորդ մասին մէջ):

Դարձեալ գտնուած է ուրիշ պապիրոս մը որ նոյն ընկերութեանէն պիտի հրատարակուի. միայն 300 տողէ կը բաղկանայ, մին Եւրիպիդէսի կորստւած ողբերգութիւններէն: Այս հատկատորոնքով և անոնց ներքեւ գտնուած մանր ծանօթութիւններով՝ կրնայ վերլուծուիլ բոլոր ողբերգութիւնը որ ամենագեղեցիկ է:

